ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՖՂԱՆԻՍՏԱՆ

—

Լրագրերի մէջ կարդում ենք հետեւեալը:

Անգլիական կառավարութիւնը հոգիւ կարդացաւ վերջացնել ավիղանական էմիրի բնարութեան գործը, երբ Կանդահարի մէջ այնպիսի անջքեր պատահեցան, որոնք անս կարելի են դարձնում անգլիական զորքերի հետ կռուելը Ավիղանիստանից: Հերատի կառավարիչ Եիբ-խան, ուղեւորվելով դէպի Կանդահար, կատարելապէս ջարդեց անգլիական զորքերին, որոնք Բէօրրօռ գենէրալի հրամանատարութեամբ նրա դէմ էին ուղարկված: Այդ զորքերը բոլորովին ցրվեցան և մի քանի թնդանօթներ կորցնելուց յետոյ փոքրիկ խումբերով հաւաքվում են Կանդահարի մէջ, որտեղ, ինչպէս երեւում է, նոյնպէս երկիւղ է սերում, որովհետեւ անգլիական զորքերը փակվում են քաղաքային ամրոցի մէջ: Այդ զորքերին օգնելու համար չուռայով ուղեւորվում են Կանդահար Հնդկաստանի բոլոր ազատ զորքերը:

Անգլիացիները պէտք է անպատճառ վրէժխնդիր լինեն իրանց հաշուութեան համար, որովհետեւ հակառակ դէպքում Կարելի մէջ ներկայումս եղած զորքերը հոգիւ թէ կարողանան վերադառնալ Հնդկաստան: Եիբ-խանը պէտք է պատժվի իր յաղթութեան համար: Այս մարի հետ Անգլիայում ամէնքը համաձայն են: Կենեռալ Բէօրրօռէլի յաղթվելը պատճառ է դառնում աւելի եռանդոտ պատերազմական գործողութիւնների:

Անգլիական զորքերի այսպէս խրճռնվելը բարոյական պատասխանատուութիւնը ամբողջապէս ընկնում է անգլիական պահպանողական կառավարութեան և Հնդկաստանի նախկին փոխարքայի վրա: Իշխանութիւնից հեռանալով, նրանք զործին այնպիսի ուղղութիւն տուին, որ պէտք է անպատճառ խանգարէր Գլադստոնի մինիստրութեան խաղաղասէր դիտաւորութիւնները: Հէնց այն բոլորին, երբ պահպանողական կառավարութիւնը պէտք է հրաժարական տար, Կանդահարի կառավարիչ նշանակվեցաւ Շիր-Ալի, որին իշխանութեան մէջ հաստատելու համար Կանդահարում անգլիական մի զօրաբաժին թողվեցաւ: Կանդահարի այս կերպով բաժանվելը Ավիղանիստանից սաստիկ տուեց վերջին անգլիերին:

ԹՈՒՐՔԻԱ

—

Լրագրերի մէջ կարդում ենք հետեւեալը:

Բ. Դրան պատասխանը պատերազմների միջոցներին արդէն յանձնված է ուր Հարին է: Թիւրքայ կառավարութիւնը հրաժարվում է կատարել Բերլինի կոնգրեսի վճիռը: Նա գտնում է, որ կոնգրեսի վճիռը անհամապատասխան է Բերլինի կոնգրեսի ցանկութեանը: Բ. Դուռը անհնարին է համարում զիջել Ցունաստանին Եանինա, Լարիսա և Մեսցօվօ՝ սարատեղական և ցեղական պատճառներով, բայց մի և նոյն ժամանակ պատրաստակամութիւն է ցոյց տալիս Ցունաստանին զիջումներ անել և խնդրում է պատերազմներից խրատնելը տալ իրանց Կ. Պոլսի դեսպաններին Թիւրքայ կառավարութեան հետ համաձայնութիւն կայացնել ավիղինական սահմանական ոճիր վերաբերութեամբ:

Եթէ պատերազմները համաձայնվին Բ. Դրան հետ, յուսական խնդիրը մի աւելորդ և ապարդիւն դրութիւն կը ստանայ: Բերլինի կոնգրեսցիայից յետոյ կը կայանայ Կ. Պոլսի կոնգրեսցիա, որը նոյն հետեւանքները կունենայ, ինչ որ ունեցաւ 1877 թուականի Կ. Պոլսի կոնֆերենցիան:

Եթէ պատերազմները կատարեն Բ. Դրան խնդիրը, նրանք անկասկած կը վնասեն իրանց արժանապատուութեանը:

Եթէ պատերազմները համաձայնեն Թիւրքայ կառավարութեան հետ, նրանք դրանով պէտք է անվաեր համարեն Բերլինի կոնգրեսցիայի վճիռը, որովհետեւ զիջողականութեան այդ ժողովը վճռել է տալ Ցունաստանին Եանինա, Մեցկովօ և Լարիսա: Այսպիսի բանակցութիւնների սկսելը կը նշանակի խոստովանել, որ կոնգրեսցիան թիւրքայից անկարելի բան պահանջեց:

Բացի այդ Բ. Դրան հետ բանակցութիւններ սկսելով Բերլինի կոնգրեսցիայից յետոյ, կը նշանակի շեղվել այն ուղղութիւնից, որին Եւրոպան հետեւում է բրիտանական կառավարութեան առաջարկութեամբ: Եթէ Բերլինի կոնգրեսցիան կայացաւ առանց թիւրքայի մասնակցութեան, այդ կը նշանակէ, որ պետութիւնները համաձայն են, թէ թիւրքան այլ ևս ձոյնի իրաւունք չունի Բալկանեան թերակղզու վիճակը անորոշելու ժամանակ, այլ պէտք է հնազանդվի Եւրոպայի վճռին: Բերլինի կոնգրեսցիայից և պետութիւնների համաձայն զրութիւնից յետոյ Բ. Դրան և Եւրոպայի մէջ բանակցութիւններ այլ ևս չեն կարող լինել:

Այսպիսով պետութիւններին մնում է սարսրդական միջոցների դիմել: Ծովային ցոյցը, որի մասին վերջին ժամանակներում բաւական շատ խոսվեցաւ, այժմ անհրաժեշտ է դառնում և դա էլ հոգիւ թէ բաւական լինի, եթէ Բ. Դուռը կմտնայ, որ միջազգային նաւատորմը ուղեւորվում է թիւրքայ ջրերը, չունենալով առաջուց որոշված մի նպատակ:

Այսպէս թէ այնպէս Եւրոպայի համար անհնարին է յետ քաշվել: Եթէ Բ. Դուռը այժմ էլ կարողանայ Ծաղրել պետութիւնների վճիռը, արեւելեան զորքերը սուր բրնատրութիւն կը ստանան, որոնց հետեւանքներ կը լինեն թիւրքիայի, Զերօզօրիայի և Ցունաստանի միջև պատերազմներ և ցեղական կռիւներ Բալկանեան թերակղզու վրա:

ՆԱՄԱԿ ՊԱՐՈԿԱՍՏԱՆԻՑ

—

Դավրէժ, 15 յուլիսի

Ծերերը միշտ պարծենում են իրանց փորձեալ խօսքերով և առակներով. Նորանք ասում են՝ որ ամենասաստիկ ձմեռվան յայսրդումյ անձրեւոտ գարուն և ապա ոսթամից և ջերմագին ամառ. 1880 թվի ձմեռվայ թանձր ձիւնը, սառնամանիքը և գարնան յորդառատ անձրեւներում լողացող կանաչազարդ եղանակ՝ արդէն մեզ ցոյց էին տուել վերի խօսքերի ճշմարիտ պատկերը, որ ներկայ ամառն էլ յուլիսից սկսեց իր սառուցիկ տաքերը, դա մի կարևոր և բնական պահանջ է բոլոր պրոտուտները և հացահատիկները լաւ հասունացնելու համար,

Ոչքան զուարճալի է, տխուր և մրրկայոյզ փոթորկից յետ տեսնել արեգակը կապուտակ երկնքում, իր բոլոր փառաւորութիւններով, այնքան աւելի ուրախալի է ունենալ ժամանակներ սովից յետ մի կատարեալ առատութիւն իր գեղեցիկ կողմերով: Այժմս Պարսկաստանը ծիտում է ցորենի առատութեան մէջ, Արդարատակարը ամեն տեսակ ուտեստներով զարդարն և թաթաղուած է. ցորենի կամ հացի լիքը վերջնակաւ մինչև մի զուռն (պուդը 1 բ.) և հաւանական է որ մինչև 2 ամիս գորա էլս գինը զառնայ, այսինքն 10 չափ ինչ որ էլ լինի նոր գայող առատութիւնը, 1880 թվի սովը թողեց մի խիստ տխուր միշտական քրօնոզրաֆիի համար: Ոչքան մարդկեղէն արարածներ մի պատառ հացի պատճառով անհետացան երկրի երեսից, որքան ընտանիքներ վերջին թշուառութեան հասած այժմս էլ հաց են մուրում գալիսած և խոպան կմնայ գարած,

Վերջապէս այլանդակ սովի վարազդը պատաւվեցաւ, նա փոքր առ փոքր իջնում է թատերական բեմից, նորան յաջորդում է օրենաւոր առատութիւնը: Մեր գրացի Վասպուրականից և հարեւան Երասխի ափունքից նոյնպէս առատ հունձքի ձայներ են լսվում. գաւառներ կի են ցորենով, ի բաց առեալ Ազրակի գաւառից, որի բնակիչները բերդերից և սովի հարվածներից կոտորվեցան և ցրվեցան: Ազրակ հայաբնակ գաւառի գիւղերից մեծագոյն մասը աւերակ և անմարդաբնակ են դարձած, նորանց ընդարձակ արտերում ոչինչ չէ բուսել, որովհետեւ ամբողջ գաւառը գրեթէ անբնակիչ էր, իսկ նրանում մնացող սակաւ բնակիչներն էլ ոչինչ չունէին, որ սերմանեն, նորանք այժմս էլ յեռին թշուառութեան մէջ տապալում են, թաթաւում աստուածային եղանդ, և խեղճերը չը գիտեն թէ ինչ անեն և որ դիմեն. Ահա սովի հետեւանքները և ահա գիտութեան արժանի գործ,

Դեռ այժմս էլ սովի երեսից բազմաթիւ խոյեցի, ասպատեցի և օրմեցի հայ, ասորի և պարսիկ մականներ՝ խմբովին գալիս և մրջիւնի նման վլասում են մեր քաղաքում և մի քանի օրից յետ անհետանում. Դրանք անցեալ ձմռվանից չարունակ գալիս և անցնում են Ռուսաստան, գորանց հետ կան հայեալ և մինչև անգամ երեխաներ, Ռուսաստանը սովի կատաղի ժամանակից մինչև այսօր մեծապէս նպաստեց մեր երկրից անցնող հաղարաւոր թշուառներին: Բացում երկաթուղի չինութիւնն էլ մի լաւն ասպարէզ բացաւ մեր բանուորների առաջ, ուր գիտում են մեծ թւով.

Մենք՝ հայերս, գիտենք միայն խօսքերով զղեակներ չինել օդի մէջ. մենք խօսքերով ասում ենք որ սովը արդէն անցաւ կամ անհետանալու վրա է, բայց իրաք այդպէս չէ, սովը դեռ չէ անցել, սովը երբ պատանել է՝ չուռայով չէ անցել, նա երկար տարիներ թողնում է իր դառն և անփոփոխրնեցի (irreparable) հետեւանքները: Սովը մեզ պահեցին վնասներ տուեց, և մենք էլ շատ բան սովորեցանք այդ դէպքից, բայց ափսոս, որ, սովը անցաւ, ասում ենք և անասրբեր մնում. չենք կամենում նորա առաջն առնելու համար ճար մտածել ներկայումս: Լաւ կը լինէր, որ իւրաքանչիւր քաղաքի և գիւղի հասարակութիւնները միասին խորհելով և գործելով մի մի չտեմարան հոգալին իրանց ապագայի համար Սովի սատանի ժամանակի հարկ, վերջի կսիծից տարսված, ամեն բերանից լսվում էր ընկերութիւններ և չտեմարաններ հիմնելու խելացի խորհուրդը ապագան ապահովելու համար: Սակայն այժմ այդ խօսքերը այլ ևս չեն կան, ինչպէս ասացի, մենք օրումը զղեակներ չինողներ ենք, մենք ժամանակից օգուտ չենք քաղել, ինչպէս ընդ միշտ Մենք ոչինչ չենք իրագործել, մենք միայն կամենում ենք ունենալ Ամենաեղ երկիրը, ուր լինի պատրաստ մանանայ, զըզան էլ գլխին անկացրած, որպէս զի մենք առանց աշխատանքի և յոգնելու անցնենք նորա գլուխը և հանգիստ կերպով վայելենք. Երեի մեր թիւրքայի հայերն էլ հէնց այդ խելքովն են ինքնորհնութիւն պահանջում Եւրոպայից, եթէ այդպէս է փանգ իրանց:

Վասպուրականի սովելոց համար նուիրատուութիւնք չարունակվում են եռանդով և հարկաւ պէտք է չարունակվի մինչև յառաջիկայ աշունքը, մինչև որ թշուառ ժողովուրդը աշնացանի համար սերմ ունենայ. Այդ դէպքում հերոս հանդիսացաւ ժրաջան «Մշակը», որ թէ Ռուսաստանից և թէ այլ տեղերից կոպէկներ հաւաքեց և իրարու վրա դրելով ահաւոր գումարներ կազմեց և հասցրեց իր անարդացած հայրենակիցներին: «Մշակը» և «փորձը» նոյնպէս իրանց ձեռքից եկած օգնութիւնը օժանդակեցին իրանց ազգակիցներին: Բայց այս երեւոյթում մեր Ռուսաստանցի հայ հարուստները երեւեալ դեր չը խաղացին: Թէ այսպէս և թէ այնպէս, վերջապէս ռուսաստանցի հայը իր բուբլիները ձգեց ազգային սովելոց գանձարանը, պարզ կասեցնցի հայը չը նայելով իր չքաւոր քսակին իր զրան առաջը կանգնած անթիվ սովելոցներին՝ իր չահիները նուիրեց մի և նոյն նպատակով: Թիւրքայի հայն էլ իր երբուն, փտած և որոշված զուբուլներով օգնութիւն հասաւ, և որ աւելի զարմանալին է մեր վեղարաւորները իրանց պլնդ պահած լռեցան, իրանց չատ սիրած արծաթը տուեցին: Սակայն ուր մնացին մեր Հնդկաստանի (առաջ խիստ ազդասէր և ողորմած) հարուստ հայերը, ուր է հայոց Ռոշիլդը—Հնդկաստանցի հարուստ կապիտալիստ պ. Արգարեանը: Նա կենդէլի ժամանակ հայկական խնդրի վրա վառ խօսում էր և բրօշիւրներ հրատարակում, իսկ այժմ նա չէ կամենում իր հզոր բաղուկը երկարացնել դէպի իր դառնամարմար սովի և ծարաւ անասնելի հարուստների տակ ճնչված հայրենակիցները: Երեի դա նորանից է, որ առաջին դէպքում երբ խօսքի պէտք կար, նա չասաց, իսկ երկրորդ դէպքում երբ գրամի պէտք կար, նա խնայեց և լուռ կեցաւ: Դա էլ մի նոր տեսակ խոնարհութիւն է, դա էլ ունի, երեի, իր մեզան:

Մի քանի խօսք էլ մեր քաղաքի ազգային տեսութեան վրա: Առհասարակ պէտք է ասել, որ մեզանում ազգային գործերը և եռանդը խիստ անչարժ են, ոչինչ աւաղ չէ գնում, ոչինչ չը կայ նախանձելի դրութեան մէջ: Դաւէժի 2 արական և 2 իգական սեռի դպրոցների հարցաքննութիւնները և պարգևաբաշխութիւնները տեղի ունեցան և վերջացան, բայց սակայն կարևոր յառաջդիմութիւն ցոյց տալու: Եթէ մի մխիթարական բան կայ, այն էլ այս է, որ լիչեալ դպրոցները չարունակել են իրանց գոյութիւնը առանց ընդհատվելու անցեալ ուսումնական չրջանում. Արամեան դպրոցը, որ դոցա մէջ մի հսկայական մարմին է, եռանդի դրամաղուրս, կալուած, հասոյթ և ռոնիկ և որ վաղուց անուանի է, իր նպատակին չը հասաւ մինչև այսօր, երեմն փայլելով և երբեմն աղօտանալով. Բայց յոյս կայ որ յառաջիկայ տարին բարեկարգութեան մէջ մտնէ. Այս մի դպրոցս առաջնորդարանում լինում են ժողով ժողովի վրա. մեր առաջնորդ Գրիգոր սրբազանը և պատուելի հոգաբարձութիւնը աշխատում են որ նորա նեթիթակնը և բարոյականը կանոնի տակ դնեն, և արդէն հրաւիրած են և վարձած մի նոր տեսուչ, որը մի չատ ջանասէր և եռանդոտ մարդ է զրաբոցական գործերում. Մեր ընթերցարանն էլ քաչ է գալիս, հիւանդ է, բայց ոչ կենսասպառ, յոյս ունենամ որ սորան կարելի է բժշկել չուռայով. Մենք ունենք մի երեքուն թատրոն ևս, զուցէ ընթերցողը կը յիշէ, բայց այդ խղճալին ոչ թէ հիւանդ, այլ կատաղեալ հոգեաբք է, և գժուար թէ դարան բուժել կարելի լինի, նա չուռայով իր հոգին կաւանդէ, նա մի ասուլ էր, որ մի ժամանակ փայլեցաւ միայն: Մեր Դաւէժում ամեն բան այդպէս է ընթանում, այսինքն երբ մի երևոյթ նոր է, բաւական յարգի է, իսկ երբ հնացաւ նա, է նշանակութիւն չունի:

Մի չաթաթ առաջ գիշերով մեր քաղաքում երեւում էր մի սարսափելի մարդակեր գազան, որ լեռան կողմից իջնելով քաղաքը և պատերից թռչելով մաս մի քանի տներ և մի քանի երեխաներ լափեց. նա յարձակվեց մինչև ագամ հասակաւոր մարդկանց վրա և մի քանիսին էլ վիրաւորեց, բայց չուռայով թագաժամանգ իշխանի որսկանները գնացին նորա ետեւից և հրացանի հարուածով սպանեցին թէև, բայց նորա երկրորդ որը երեւեցաւ մի ուրիշը: Կարծում են որ դա մի բռնին լինի, որովհետեւ նկատել են որ նա իր վրի վրա բաշ ունի, բայց գժուար թէ այս կողմերում բռնին գտնվի, հաւանական է որ այդ հրէշը մի սարսափելի հերթափ գայլ լինի, վրի վրա միայն մի քանի մարդ մնացած, որ կարծում են թէ բաշ է. իսկ աւելի հաւանականն այս է, որ այդ մարդերը սովի ժամանակից սովորել է անօթութիւնից վերջնկած և փտած մարդոց մարմիններով իրան յագուրդ տալ, և յետոյ գերեզմաններին է մտացել և կերել, ապա փորձել է մտնել քաղաքի մէջ.

Արմենակ

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Կ. ՊՈԼԻՍ, 15 յուլիսի: Միաշաբաթ-փաշա Զմիւռնիայի նահանգապետ նշանակվեցաւ, իսկ Զմիւռնիայի նահանգապետ Հաճի-փաշա Սիրիայի նահանգապետ նշանակվեցաւ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 յուլիսի: «Новое Время» լրագիրը հաղորդում է, որ Ս. Պետերբուրգի մէջ գտնված գաղտնի ապարանների քաղաքական երկու գործերն էլ կը քննվին սեպտեմբերին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 յուլիսի: Յուլիսի 24 Վասիլեվսկի կղզու վրա կայսեր արքայն 4 սպայականներ, որոնցից մէկ բէվզվիր արձակից պոլիցիական օֆիցերի, դանդարմի և դանդարմի վրա, վերջիններին վիրաւորեց, դանդարմի վէրքը մահացուցիչ է:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 յուլիսի: «Молва» լրագիրը հաղորդում է իբրև հաստատ լուր, որ նշանակված է Բարձրագոյն հրամանով մի մասնաժողով Վալուլիի նախագահութեամբ, Լօրիս-Մելիկով, Մակով, Սաբուրով և Պրաստ անդամներով տպարարական օրէնքները վերանայելու համար:

ԼՈՆԴՈՆ, 27 յուլիսի: 1000 գինուորից բաղկացած Ծովային զօրաբաժնին հրամայած է ուղևորվել Իրլանդիա, որտեղ անկարգութիւններ են սպասվում:

ԱԹԻՆԷ, 27 յուլիսի: Արքայական հրովարտակով հրամայած է զօրքեր պատրաստել:

ԼՈՆԴՈՆ, 28 յուլիսի: Կուչանից հեռագրում են, որ թիւրքմէնների բոլոր զօրքերը կենտրոնացած են Գէօք-Դաչլի մօտ: 12000 օգնական զօրքեր հասան Մարվից:

Կ. ՊՈԼԻՍ, 28 յուլիսի: Բ. Դուռը պատուիրեցին պահանջի համեմատ համաձայնեց Զերնոգորիային գիջել Դուլցինը:

ԵՆԻ-ԿԵՍԿԻ, 27 յուլիսի: Ռուսներ աջողութեամբ վերջացրեց քարանծրայ ծամապահութիւնը:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՍՏՈՒՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՐԵՇՏԱՆԵՂ ԱՅԳԵՊՆԵՐԻ, ԽՈՐՈՎԱԿՆԵՐԻ, նոր հրդեհաշէջ «ԿՕՍՄՈՊՈԼԻՏ», ամեն տեսակ գործածութեան համար ջուր քաշող մեքենաներ և ամեն տեսակ պատկանելիք ջրանցքների համար, ԳԱՐԹԱՐԱՆ ԵՒԹ. ԼԱՆԳԵՆՇԻՊԵՆ ԲՈՒԿՈՒՍ-ՄԱԳԴԵԲՈՒՐԳԻ մէջ: Ջուր քաշող մեքենաների Բիւր. Լանգենշիպէն Ֆիրմայով Բուկուս-Մագդեբուրգի մէջ եղած գործարանի Ռուսատանի միակ ներկայացուցիչ, ԱՆԳԼԻԱ ԼԱՆԳԵՆՇԻՊԵՆ, Ս. Պետերբուրգ, ՄԱԼԱՅԱ-ԽՍԱԼԵԱՆՍԿԱՅԱ № 11 առաջարկում է: Ունենալով մեր սեփական գործարանի պատրաստած ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ՄԵՔԵՆԱՆԵՐ խոզովակների ՊԱՀԵՍՏ ամենատ ձեւերի, նոյնպէս և ՋՐԻՐ ՔԱՇՈՂ ՄԵՔԵՆԱՆԵՐ դատապան ձեւերի, ՁԵՌՔԵՐՈՎ, ՁԻԱՆԵՐՈՎ, և ՇՈՒՐՈՎ գործելու համար, կարող եմ բաւականացնել ամեն տեսակ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ, ԳԻՒՂԱՔԱՂԱՔՆԵՐԻ ՁԵՄՈՒՍԿՈՆԵՐԻ, գիւղային և քաղաքային ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐԻ և այլն ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ: ԵԹԷ յիշեալ առարկաներից մէկը հարկաւոր լինի, խնդրեմ պատուել ինձ ցանկութիւն յայտնելով: Նաեւ սանալուց յետոյ կուղարկեմ ՁԻԱՐԱՒՈՐ նկարներով ծածկված ՊԵՏՅԱՊՈՒՐԱՆՆ և ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ կը հաղորդեմ

2—5

Նուազով լոյս կը տանէ ԴԱՆՆԱՄՈՒԻ ՀԱՄԱ ՅԱՂՆԱԳՐԱՆ ժողովրդական գործածական երգերի:

ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱԿԸ

Զայնագրութիւն և հրատարակութիւն Յովհաննէս Սուգանաճանցի, և կը պարունակէ իւր մէջ վեց երգեր:

1) «Ակնի. ընկեր մեռանում եմ»
2) Ակնապիշ անձայն»
3) «Քաժաներ առնուք, եղբարք»
4) Մեր հայրենիք, թշուառ անուր»
5) «Հայոց աղջիկներ և
6) «Հայրենիք Սրբազան»

Երկրորդ տեսակի գինը լինելու է մի բուբլի. ցանկացողները ստանալ դաշնամուրի համար ձայնագրած երգերի առաջին տեսակը, որ պարունակում է իւր մէջ չորս երգեր. 1) «Անի քաղաք». 2) «Ինձ համար, չէ». 3) Յուրտը փչեց» և 4) «Մինչեռնակ» պէտք է ուղարկին մի բուբլի. տասից աւելի գնողներին 20 % զիջումն է լինում:

Նոյն հեղինակի մօտ վաճառվում է նոր ԵՐԳԱՐԱՆ ՖԼԻՑԻՈՒՆԻ, որի մէջ պարունակվում են 50 հատ ընտիր նոր հրատարակված երգեր: Գինը 30 կոպէկ: Ցանկացողները ստանալու և ձայնագրած երգերը, և Ֆիլյուտունի նոր երգարանը, պէտք է ուղարկին մէկ բուբլի և 30 կոպ. հետեւեալ հասցէով. Въ Тифлисъ. Ивану Артемьевичу Сузанаджанцъ На Петхаинской ул. собственный домъ № 14.

Համեմատելէ անգլիական խանութի թէյի գնով 1 ր. 10 կ., 1 ր. 20 կ., 1 ր. 40 կ., 1 ր. 60 կ., 1 ր. 80 կ. ֆունտի համար այն թէյերի հետ, որոնք ուրիշ խանութներում 30%-ով թանգ են ծախվում և այդ խանութի ֆունտը 2 բուբլանոց թէյը, ուրիշ տեղ 4 ր. ծախվող թէյի հետ:

41—100

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴԱՑԵՐԻ ՀՆԳՈՒՈՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱԼՈՏԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ:

Երկուշաբթի. Գաւրօնսկի կանանց հիւանդ. Դօրլեվիչ ներքին հ., Բօտինեանց կանանց և երեխաների հ., Քիւչարեանց խրուրգիական և աչքերի հ., Շտեմրօրսկի վիներական և կաշու հ., Բարայեան ջղային և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Մինկեվիչ խրուրգիական հ., Գրօրով վիներական և բոցագլի հ., Բէկլիս աչքի հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Կրասնօգլեադով, Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ.:

Հոգեշաբթի. Լիսիցեվ Բուգրովսկի ներքին հ., Շտեմրօրսկի կենտրական և կաշու հ., Սատուծատուրով կանանց հիւանդութիւններ:

Հինգշաբթի. Գրօրով վիներական և բոցագլի հ., Բօտինեանց կանանց և երեխաների հ., Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Քիւչարեանց սիֆիլիսի և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Գաւրօնսկի կանանց հ., Մինկեվիչ խրուրգիական հ., Կրասնօգլեադով և Լիսիցեվ ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շտեմրօրսկի և Սատուծատուրով վիներական և կաշու հ., Բարայեվ ջղային և ներքին հ.:

Շաբաթ Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Բրօրով կուրծքի հ., Անկովսկի վիներական և կաշու հ.:

Բացի այդ բժիշկ Գրօրով բժշկանոցի մէջ ընդունում է անվարձ ազքատ հիւանդներին ամենայն օր երեկոյեան 4—6 ժամը:

Բժիշկ Բարանով չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլեկտրական բժշկութեան և ներքին հ. համար: Բնակարանը գտնվում է Սերգիեվսկայա փողոցի վրա, Բպանցուրովի տանը:

Առաւաւոտյան 9 բրեխա աղքատ հիւանդներին բժշկանոցի տոմսակով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դիրեկտոր Լիսիցեվ:

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ ԴՈՒՐՍ ԵԿԱԾ ՀՐԱՏԱՐԱԿ ՈՒԹԵԱՄԲ (Զ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ) ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՂԱՒԱՌԱՌԱՆՈՑԻ և ԾԱԽՎՈՒՄ Է ԲԱՑԱՌԱՊԷՍ ՆՈՅՆ ՏԵՂԸ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ ձեռնարկներ աշխատասիրութեամբ Ն. ՍԻՄԷՈՆԵԱՆՑԻ:

Ա. ՏԱՐԻ նախագիտելիք (իբրև Հայրենագիտութեան դասերի օրինակ տրուած է Թիֆլիզի Հայրենագիտութիւնը), հինգ պատկերներով, գինն է . . . . . 35 կոպ.

Բ. ՏԱՐԻ մասն ուսումնական և բնական երեսուն և մէկ պատկերներով, գինն է . . . . . 60 կոպ.

գումարով առնողներին զիջումն կը լինի: Մամուլի տակ է Գ. ՏԱՐԻՆ մասը քաղաքական:

15—20

ՀԱՅ ԿԱ ՎՃՍԱՂՈՒՄՄՆԻՆՅԵՆ ԴՈՒՐՍԱՆԻՆԵՍ

ԱՂԷՔՍԱՆԴՐԱՊՕԼՈՒ երկսեռ դպրոցաց բարձր դասատանց համար հարկաւոր է եկող ուսումնական տարուան համար ռուսաց լեզուի մի ուսուցիչ, որ աւարտած լինի որ և է բարձրագոյն դպրոցում, շաբաթական 24 դասով: Յանկացողները իրանց պայմանները կարող են յայտնել երկսեռ դպրոցների Հոգաբարձութեանց:

Հոգաբարձուք { Սարգիս Միրզայեանց. Ասատուր Խաչատրեանց.

ԱՌԻԵՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ ԵԳՕՐ ԿԱՍՈՒՄՈՎ, ԵՒ ԸՆԿ.

յայտնում է այդ առեւտրական տան գործերով բոլոր հետաքրքրվածներին, որ գործերի ընդարձակվելու պատճառով այդ տան գլխաւոր գրասենեակը օգոստոսի 1-ից կը տեղափոխվի Դէմակլի տան վերին յարկը Գանօվսկայա փողոցի և Սրիվանսկայա հրապարակի անկիւնի վրա: Տուրքերի տալու և մուտքերի ստանալու համար գրասենեակը հասարակ օրերում բաց է լինում առաւօտեան 9 ժամից մինչև 2, իսկ կիրակի օրը 8—10 ժամ: Կնում է 1 և 2 փոխառութեան ռոմանների և ծախում է նրանց այն պայմանով, որ գինը 12 ամիսների ընթացքում հատուցանվի: Այդ պայմաններով մի տոմսակ գնողը տարվայ ընթացքում ժամն ունի տարածից այն 20 համարների, որոնք ցոյց են տրված վկայականի մէջ չորս տիրաժներին: Ցանձնարարութեամբ գնում է և ծախում է մասնաւոր անձանց ամեն տեսակ անշարժ կայքեր, կօմիսիայով ծախում է ապրանքներ և նրեթեր: Մասնում է տպված պայմանագիրներ, բնակարաններ, խանութներ և գաւառի տեղեր քրէէով տալու համար: Տուրքերին մինչև նոր կարգադրութիւնը վճարում է.

1) Պահելու համար մինչև պահանջելը 4½%, պայմանաւոր 5½%, 2) տուրքերին 6 ամսով 5½%, 9 ամսով 6½%, 1 տարով 7½% 1½ տարով 8%, 2 տարով և աւելի 9: 3) Այդ ընկերութեան 1 կարգի պայ ունեցողների մասնաւոր պայմանաւոր տուրքերին 9%: Պարտամարտկով յայտնի անձի ապահովութեամբ փող տալու ժամանակ առնում է մի ամիս ժամանակով 10%, մի շաբաթ ժամանակով 9%:

Աւելի մանրամասն տեղեկութիւններ ցանկացողները կարող են ստանալ ամեն օր գրասենեակի կառավարից:

9—10 (2)

ՄԱՆԿԱԿԱՆ ԳԱՐՏԷԶ

ԵՒ

ՏԱՐՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Օգոստոսի 20-ից կը սկսուի քննութիւնները և նորեկների ընդունելութիւնը տղայց և օրիորդաց 4—15 տարեկան հասակը:

ՏԱՐՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ ԲԱՑՈՒԼՈՒ Է ՊԱՆՍԻՈՆ ՈՒՐ ԿԸՆԴՈՒՆՎԵՆ ԳԻՇԵՐՕԹԻԿ ԵՒ ԿԻՍԱԳԻՇԵՐՕԹԻԿ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ:

Բ. Միրիմանեանց

ԹԻՖԼԻՍԻ ՊՐՕԳԻՄՆԱԶԻԱ ՎԵՐԱՁԱՐՈՒՆ, հայոց Ծխական և մասնաւոր ուսումնարաններում 8 ՏԱՐԻ դասախօսութիւն արած մի ԵՐԻՏԱՍԱՐԴ ներկայ սեպտեմբերի 1-ից ցանկանում է ՈՒՍՈՒՑԻՉ ՊԱՇՏՕՆ ստանալ բացառապէս ՌՈՒՍԱՑ լեզուից և ԹՈՒՐՔԱՀԱՅՈՒԹԵՆԻՑ, ինչպէս Թիֆլիսում, նոյնպէս և գաւառներում: Տեղեկանալ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ կամ Էնիֆանջեանցի ԴՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՆԵՐՈՒՄ:

5—22

ՄԻՆԱՍ ԳԻՒԼԶԱՏԵԱՆ, որ կանոնաւոր ունի ԹԱՒՐԻՋ քաղաքում, ընդունում է ամեն տեսակ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ կօմիսիօնով կատարելու անպապաղ, ամենայն ՅՇՏՈՒԹԵԱՄԲ, և դիմում է պ. պ. վաճառականներին, առաջարկելով իր ծառայութիւնը:

4—5

Дозволено Цензурою 29 Іюля 1880 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելսոնի Типографія А. А. Михельсона